

Հաստատում եմ
Շիրակի Ս. Նալբանդյանի
անվան պետական համալսարանի թեկտոր
Ե.Ս. Սերոբյան
«29» նոյեմբերի 2023թ.

Կ Ա Ր Ծ Ի Ք

Առաջատար կազմակերպության

Գայանե Աշոտի Մելքոնյանի «Սնդիկով աղտոտման խնդիրը Հայաստանի հանրապետության խոշոր քաղաքներում» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված ԻԴ.04.01 «Երկրաբնապահպանություն» մասնագիտությամբ աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ԱՏԵՆԱԽՈՍԱԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ատենախոսությունը կառուցված է ՀՀ ԲԿԳԿ-ի պահանջներին համապատասխան, կազմված է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից, առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից (177 անուն) և հավելվածից: Այն շարադրված է 149 էջի վրա, ներառում է 23 աղյուսակ և 44 նկար: Աշխատանքի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսությունում դրված գիտական նպատակին: Ատենախոսության համար հիմք են հանդիսացել «ՀՀ տարածքում սնդիկով աղտոտման ռիսկերի գնահատում» թեմատիկ նախագծի տվյալները (թեմայի ծածկագիր՝ 15T-1E017): Սեղմագիրը լիովին արտացոլում է ատենախոսության բովանդակությունը և ամբողջությամբ համապատասխանում է աշխատանքի կառուցվածքին:

Հետազոտվող հիմնախնդրին լիովին տիրապետումը թույլ է տալիս հեղինակին ներածությունում գրագետ հիմնավորել աշխատանքի արդիականությունը,

ներկայացնել աշխատանքի նպատակը և ձևավորվել հետազոտության 3 խնդիրները: Տվյալ բաժնում նշվում է աշխատանքի գիտական նորույթը, գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին գլուխը ներկայացված է 5 ենթագլուխներով, որոնցում քննարկվել են սնդիկով զլոբալ աղտոտման միտումները և միջազգային գործընթացները, համառոտ ներկայացվել են շրջակա միջավայրի տարբեր սուբստրատներում սնդիկի էկոլոգատերկրաքիմիական առանձնահատկությունները: Անդրադարձ է կատարվել սնդիկի և իր միացությունների թունավոր ազդեցության առողջական ռիսկերին, քննարկվել են դեմերկուրիզացման ժամանակակից տարբեր մեթոդները: 5-րդ ենթագլուխում աշխատանքի նպատակին և խնդիրներին համապատասխան, վերլուծվել և ներկայացվել են ՀՀ նախկին և ներկա արդյունաբերական քաղաքներում տարբեր տարիներին իրականացված էպիզոդիկ էկոլոգատերկրաքիմիական, երկրաքիմիական, երկրաբանական ուսումնասիրությունները, սնդիկի տարածաբաշխման գեոգեն և անթրոպոգեն գործոնները: Ներկայացված տվյալների շարադրումը վկայում է, որ հայցորդը վարժ տիրապետում է նյութին:

Գ.Ա.Մելքոնյանի հետազոտություններն աշխատատար և բազմաբնույթ են: Հարկ է նշել, որ իրականացված հետազոտություններին հեղինակը ցուցաբերել է մեթոդաբանորեն գրագետ մոտեցում, ինչը ներկայացված է «Հետազոտության նյութեր և մեթոդներ» գլխում: Տվյալների վիճակագրական մշակման մեթոդները համապատասխանում են ժամանակակից մոտեցումներին: Դասական երկրաքիմիական հետազոտական մեթոդների և մեթոդաբանության կիրառման հետ զուգահեռ մշակվել է քաղաքային տարածքների շրջակա միջավայրում սնդիկով աղտոտման բացահայտմանն ուղղված հետազոտական մոդելային ալգորիթմ, որում ընդգկված են սնդիկով աղտոտմանն ուղղված էկոլոգատերկրաքիմիական հետազոտությաննեքց մինչև որոշումների կայացման փուլերը:

Ատենախոսության 3-րդ գլխում հեղինակի կողմից քաղաքային տարածքներում Hg-ի առկայության, պարունակությունների մակարդակների գնահատման, հավանական աղտոտման աղբյուրների բացահայտման, էկոլոգիական և առողջական ռիսկերի գնահատման համար Վանաձոր քաղաքի օրինակով մշակվել է հետազոտական մոդելային ալգորիթմ՝ որպես հետազոտական աշխատանքների և սնդիկազերծման միջոցառումների մեթոդական ցուցում և գիտահեն որոշումների կայացման գործուն գործիք:

Ատենախոսության 4-րդ գլխում մշակված հետազոտական ալգորիթմի մեթոդաբանությամբ հեղինակի կողմից ուսումնասիրվել են ՀՀ այլ քաղաքներում սնդիկով աղտոտման խնդիրները՝ ալգորիթմում ներդնելով արդեն իսկ առկա հետազոտությունների արդյունքները և բացահայտվել են նշված քաղաքներում սնդիկի ռիսկի գործոն հանդիսանալը, սնդիկի արտանետման հնարավոր աղբյուրները, սնդիկի աղտոտմամբ պայմանավորված առկա իրավիճակը, վերլուծվել են նախկինում արված հետազոտությունները՝ վերհանելով բացերը և թիրախավորելով հետագա հետազոտությունների հիմնական ուղղվածությունները:

Աշխատանքի հիմնական արդյունքները մանրամասն ամփոփված են «Եզրակացություններ» գլխում: Եզրակացությունները տրամաբանորեն բխում են ատենախոսության բովանդակությունից և համապատասխանում են առաջադրված խնդիրներին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գայանե Մելքոնյանի կողմից ներկայացված ատենախոսական աշխատանքը նվիրված է ՀՀ խոշոր քաղաքների տարածքներում սնդիկով պոտենցիալ աղտոտման խնդիրների բացահայտմանը և քաղաքային տարածքներում սնդիկով աղտոտման գնահատման հետազոտական մոդելային ալգորիթմի մշակմանը:

Սնդիկն (Hg) ամբողջ աշխարհում էկոլոգիական լուրջ վտանգ ներկայացնող տարրերից է: Այն կենսաքիմիական և էկոթունաբանական յուրօրինակ հատկությունների հաշվին դասվում է կայուն կենսակուտակվող քիմիական տարրերի շարքին և առանձնանում է կենդանի օրգանիզմների և շրջակա միջավայրի վրա տարաբնույթ բացասական ազդեցությամբ: Հաշվի առնելով, որ շրջակա միջավայրի սնդիկով աղտոտումը բացասական ազդեցություն ունի ինչպես էկոլոգիական, այնպես էլ մարդկանց համար առողջական լուրջ վտանգների առումով, տվյալ հետազոտությունը խիստ արդիական է հատկապես քաղաքային տարածքներում, որոնք առանձնանում են մեծաքանակ բնակչության կենտրոնացմամբ, տարբեր աղտոտման աղբյուրների առկայությամբ և աղտոտիչների հոսքի և կուտակման ինտենսիվությամբ: Հեղինակի կողմից իրականացված հիմնարար և կիրառական հետազոտությունը խիստ արդիական է ոչ միայն սնդիկի գլոբալ աղտոտման համատեքստում, այլև կարևոր է հատկապես ՀՀ համար, քանի որ ՀՀ-ում լուրջ բաց կա նման միատարր, սնդիկի թիրախավորմամբ ուսումնասիրությունների: Ավելին, ատենախոսական աշխատանքի արդյունքների

հիման վրա տրվել են ՀՀ-ում «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիայի իրականացման գիտական հիմքերը, այս առումով ևս իրականացված հետազոտության արդիականությունը առարկության տեղիք չի տալիս:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների լուծման նպատակով իրականացված վերլուծությունների և հետազոտությունների արդյունքում ստացվել են տեսական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից, ըստ հեղինակի, գիտական նորությոն արտացոլող հիմնական դրույթներն են.

– Առաջին անգամ Վանաձոր քաղաքի օրինակով իրականացվել է սնդիկի թիրախավորմամբ համալիր էկոլոգաերկրաքիմիական գնահատում՝ հիմնվելով տարբեր մեթոդական մոտեցումներով քաղաքի ողջ տարածքի հողի, տերևի և փողոցի փոշում, քաղաքում հոսող գետերի ջրում և հատակային նստվածքներում սնդիկի պարունակությունների գնահատման արդյունքների վրա:

– Առաջին անգամ Վանաձոր քաղաքի օրինակով իրականացված հետազոտության արդյունքների հիման վրա մշակվել է հետազոտական մոդելային ալգորիթմ՝ որոշումների կայացնողների համար սնդիկազերծման միջոցառումների մեթոդական ցուցում և գիտահեն որոշումների կայացման գործուն գործիք:

– Առաջին անգամ ՀՀ խոշոր քաղաքների տարածքների համար կիրառվել է սնդիկի աղտոտման հետազոտական մոդելային ալգորիթմը՝ բացահայտելով ինչպես հետագա հետազոտությունների թիրախները, այնպես էլ սնդիկով աղտոտման առումով խնդրահարույց տարածները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Ատենախոսական աշխատանքի արդյունքներն ունեն կիրառական մեծ նշանակություն և արդեն իսկ օգտագործվել են ՀՀ-ում «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիայի նախնական գնահատման, վավերացման և կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների իրականացման գործընթացներում:

Աշխատանքում դիտարկված մոտեցումները, որոնք ուղղված են քաղաքային տարածքներում սնդիկով աղտոտման ծավալների և մասշտաբների գնահատման, ռիսկային տարածքների բացահայտմանը, կարող են ուղենիշային լինել քաղաքաշինական պլանավորման ընթացքում բնապահպանական միջոցառումների

մշակման աշխատանքներում: Աշխատանքի արդյունքները կարող են կիրառվել սնդիկի և սնդիկի միացությունների ազդեցությանն առնչվող սանիտարահամաճարակային ուսումնասիրություններում, որոնք ուղղված են սնդիկի ազդեցության դաշտում գտվող խոցելի բնակչության առողջապահական ռիսկերի բացահայտմանը:

Ատենախոսությունում իրականացված վերլուծություններից բխող առաջարկությունները կարող են օգտագործվել ՆՈՒՀ-երի շրջակա միջավայրում սնդիկով աղտոտման գնահատման, ռիսկային միջավայրերի բացահայտման համար առաջարկված մոտեցումները կարող են ուղենիշային լինել child-responsive քաղաքային պլանավորման ռազմավարության մշակման համար:

Մշակված հետազոտական մոդելային ալգորիթմը կարող է ծառայել որպես հետազոտական աշխատանքների և սնդիկագերծման միջոցառումների մեթոդական ցուցում և գիտահեն որոշումների կայացման գործուն գործիք:

Միևնույն ժամանակ նշված դրականի հետ մեկտեղ, աշխատանքում առկա են որոշ թերություններ, բացթողումներ և վրիպումներ, որոնց վրա կցանկանայինք հրավիրել ատենախոսի ուշադրությունը.

1. Սնդիկով գլոբալ աղտոտման միտումները, դինամիկան և միջազգային գործընթացները շարադրված է 2 էջում, որը մեր կարծիքով քիչ է:
2. Գյումրու քարտեզների պայմանական նշանների համակարգը կարելի էր ներկայացնել ավելի լավ և լրամշակել նոր նշաններով (էջ 155-156):
3. Էջ 86-ում պետք է լինի «միջանկյալ եզրակացություններ»:
4. Ատենախոսություն մեջ շատ են ջնջումները:
5. Որոշ քարտեզների տպագրական որակը ցածր է, ինչի պատճառով դրանք դառնում են վատ ընթերցելի:

Այնուհանդերձ, նշված թերությունները չեն նսեմացնում աշխատանքի արժեքը: Ատենախոսությունում ներկայացված արդյունքները հիմնավորված են բավարար քանակի փորձարարական նյութով, իսկ եզրահանգումները բխում են ստացված արժանահավատ տվյալներից: Ատենախոսությունը ամփոփ, արդիական հետազոտություն է, որն արտացոլում է հեղինակի ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք կատարելու ունակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով վերը շարադրվածը, «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը որպես առաջատար կազմակերպություն գտնում է, որ

Գայանե Աշոտի Մելքոնյանի «Մնդիկով աղտոտման խնդիրը Հայաստանի հանրապետության խոշոր քաղաքներում» թեմայով ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատանք է, թեմայի արդիականությամբ, նյութի ծավալով, ժամանակակից մեթոդաբանական մոտեցումներով, ստացված արդյունքների գիտական նորությամբ և գործնական նշանակությամբ լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող ԲԿԳԿ-ի պահանջներին:
Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը:

Գայանե Աշոտի Մելքոնյանը արժանի է «Երկրաբնապահպանություն» (դասիչ ԻԴ.04.01) մասնագիտությամբ աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Աշխարհագրության և սերվիսի ամբիոնի նիստում (28.11.2023թ., արձանագրություն թիվ 6):

Նիստին ներկա էին՝ աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ.Ս. Մարտիրոսյանը, երկրաբ. գիտ դոկտոր, դոցենտ Ա.Ա. Թամրազյանը, աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա.Պ. Վալեսյանը, աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ Գ.Ռ. Ավետիսյանը, աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա.Ն. Ամազարյանը, աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա.Հ. Ներսիսյանը, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա.Գ. Բոյաջյանը, երկրաբ. գիտ թեկնածու Ռ.Ս. Սարգսյանը:

ՇՊՀ աշխարհագրության և սերվիսի ամբիոնի վարիչի ԺՊ,

Աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ



Ա.Պ. Վալեսյան

Աշխարհագրության և սերվիսի ամբիոնի վարիչի ԺՊ Ա. Վալեսյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՇՊՀ գիտքարտուղար՝

Կենս. գիտ. թեկնածու, դոցենտ



Ա.Պ. Վալեսյան

